



## ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ՛ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԵՎՄՏՍԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում գեղեցիկ ավանդություն է դարձել գրական երեկոների կազմակերպումը, որոնց իր խրախուսիչ ներկայությունն է բերում Ազգի Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վագգեն Առաջինը:

Սույն թվականի փետրվարի 21-ին, երեկոյան ժամը 20-ին, լեփ-լեցուն էր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճը: Այստեղ էին հավաքվել Մայր Աթոռու միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունն ու հրավիրյալներ՝ հաղորդվելու արևմտահայ բանաստեղծության կահարդիչ գույներին:

Ծուտով, ներկաների ուրախ ծախմարությունների ներքո, դահլիճ է մտնում Վեհափառ Հայրապետը՝ ուղեկցությամբ ուխտավորաբար Մայր Աթոռուն գտնվող Փառիզի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ եպս. Նագաշյանի և Կամադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վագգեն եպս. Քեշիշյանի:

Գրական երեկոյի բացման ոգեշոնչ խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռու միջնեկեցական հարաբերությունների բաժնի վարիչ, հոգևոր ճեմարանի երկարամյա դասախոս պր. Պարգև Շահրապեանը.

«Այսօրվա երեկոն այս ուստմնական տարրու հոգևոր ճեմարանի հարկի տակ կազմակերպված 3-րդ ամունքի երեկոն է: Այն նվիրված է առևմտահայ բանաստեղծությանը: Արևմտահայ բանաստեղծական ընդգրկում է ալելի քան հարյուր տարվա մի ժամանակաշրջան: Ակզբանվորվել է այցլավ դարի 50—60-ական թվականներին: Ակզբանվորմները և առաջին ներկայությունները եղել են հայոց Ղևոնդ Ալիշանը, Մկրտիչ Պեշիկթաշյանը և Պետրոս Դուրյանը: Այս երեկը նոր թարմ շոնչ հա-

ղորդեցին արևմտահայ բանաստեղծությանը և դարձան մեջ հիմնադիրները գրական մի նոր ուղղության, որ ծանոթ է ոռմանախզմ անունով: Մինչ այդ մեր բանաստեղծության մեջ իշխում էր դասական կասիցիսուական ուղղությունը, որի ներկայացուցիչներն էին Միկիթարյան հարերից՝ Հյուրմյուզը, Արսեն Բագրատունին, ինչպես նաև Թովման Թերզյանը և որդիշներ, որոնք հորինում էին դասական պարտադիր կատապարտների վրա ձևաված չոր, անոնյզ, անկենդան քերթվածներ գրաբար լեզվով, որը գերիշխում էր մեծ մասմբ միութը, բանականությունը: Մեր ոռմանախկ բանաստեղծները եկան հաստատելու անձնական զգացումների և հույզերի գերակշռությունը բանականության վրա, ազատ արտահայտություն տվեցին իրենց ներքին ապրումներին: Նրանք բանականության միահեծան գերիշխանությանը հակադրեցին երևակայության և երազանքի քմայքները, սրտի թոհքըները, բնության զգացությունը և այլն: Այս բոլոր ստորոգելիները ներկա են Ալիշանի, Պեշիկթաշյանի և Դուրյանի ստեղծագործություններում: Այս երեք հեղինակների մեջ իր բանաստեղծական բացառիկ տաղանդով բնականարար առանձնանուն է Պետրոս Դուրյանը, որը մեր գրականության մեջ հայտնի է «Ակյուտարի սիխակ» մականունով: Ունեցել է շատ դժբահան ճականագիր: Եղել է աղքատ ծնողների զավակ: Նյութական ծանր և անապահով կյանքը, բնակարանային աննպաստ այսմանները, այս բոլորի վրա նաև բնականից թուլակազմ և գերզգայուն լինելը կանխահաստրեն քայլայում են երա առողջությունը և ընդամենը 20-21 տարեկան հասակում երան առաջնորդում գերեզման: Այսպիսով շատ կար է

ինում նրա ստեղծագործական կյանքը՝ հազիվ 4—5 տարի: Ծիշու է, նրա գրական վաստակը շատ համեստ է իր քանակով, շորո 35—40 բանաստեղծություն, մի քանի թատերական գործեր ազգային-պատմական թեմաներով և մի շարք տիտոր, հուսահատությամբ լի պահանջելի համակներ՝ ուղղված իր բարեկամներին և մտերիմներին: Սակայն, ինչպես ասում են, արժեքը քանակի մեջ չէ: Նրա քերթվածներից շատերը մինչև այսօր էլ մանու են որպես մեր գրականության մեծարժեք հազվագյուտ նմուշներ և շարունակում են ներշնչել մեզ: Այդ քերթվածներով ներշնչվել են արևմտահայ բանաստեղծների մի քանի սերունձներ, որոնց մեջ իրենց բանաստեղծական հզոր տաղանդով փայլում են մասնավորապես չորս դեմքեր՝ Մեծարենցը, Վարուժանը, Սիամաճոն և Թեքեյանը, որոնք սերմեր կիցներ են և ժամանակով էլ Դուրյանից երկու սերունդ կրտսեր: Սրանք հալվասարազոր մեծություններ են և Դուրյանի հետ կազմում են, ինչպես ընդունված է առել, արևմտահայ բանաստեղծության հինգ գրագիրները: Սրևմտահայ հայտնի գրաքննադատ Հակոբ Օշականը այս սերնդի ներկայացուցիչներին իրավամբ տվել է «արվեստագիտ սերունդ» որպանը, որովհետև բոլորի ստեղծագործություններում էլ, արդարն, զգալի է բանաստեղծական արվեստի՝ ձևի մտահոգությունը: Սրանց բոլորի կյանքն էլ, բացի Վահան Թեքեյանից, դժուախառար եղավ կարճատու: Սիյուրքահայ գրող Անդրանիկ Շառուկյանը «Եղերախս քերթումներ» խորագիրը կրող իր գրքում մի տեղ ասում է, որ հայ բանաստեղծները ունեցել են երկու ահավոր թըշնամի: առաջինը թոքախտն է, երկրորդը՝ թուրքը: Եվ իսկապես մեր լավագույն բանաստեղծներից շատերը՝ Դուրյան, Պեշիկաշլան, Մեծարենց, Վահան Տերյան, Գարեգին Պեշկություրյան, Մատթեոս Զարիֆյան և որդիշներ, երիտասարդ հասակում զոհ դարձան թոքախտին, իսկ շատերին էլ թուրքի յարաղանը հնձեց իրենց ստեղծագործական կյանքի վաղ տարիներին՝ Վարուժան, Սիամաճոն, Շուրեն Սևակ և այլն: Եթե սրանց կյանքը ընթանար խաղաղ հունով և հանգեր իր բնական ավարտին, անտարակույս որ մեր գրականությունը կիարդարանը թե՛ որակով և թե՛ բանակով գերազանց ստեղծագործություններով:

Սրևմտահայ բանաստեղծության այս հինգ գրագիրները թե՛ հավասարազոր մեծություններ են, սակայն նրանցից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն աշխարհը, իր անհատականությունը, սեփական ձայ-

նը, զգալու և արտահայտվելու իր առանձին եղանակը, լեզվի և ոճի առանձնահատուկ գեղեցկությունը, որոնցով էլ մեկը մյուսից զատրուշվում է: Բայց նրանց մեջ կա նաև մի ընդհանրություն, ներքին ընդգծված մի հմանություն, որ նրանց միացնում է իրար: Դա տարածն և տարաբնույթ նրանց քերթվածների մեջ արտահայտվող ոգու ընդհանրությունն է, որ նրանց ստեղծագործությունները դարձնում է գերազանցապես հայաշունչ, հայադրոշմ, տոհմիկ: Դա, ըստ իս, պետք է բացատրել նրանով, որ նրանք բոլորն էլ սևվել են նոյն ակունքից, ներթափանցվել մեր հմագույն բանաստեղծության ավանդներով: Թույլ տվեք բերել այստեղ մեկ-երկու օրինակ այս միտքը հաստատող: Ահա Դուրյանի բանաստեղծություններից մեկից վերցված մի քառյակ.

Շաղի, շողի ժամք էին,  
Վարդից հրդեհ կար յերկին.  
Փոխան ամպոց հուր հիւսքի,  
Տեղայր մարգրիտ եւ ոսկի:

Կամ Վարուժանի հետևյալ տողերը.

Եղեգնեայ գրչով երգեցի փառքեր,  
Քեզի ընծայ, իմ հայրենիք,  
Սօսեաց անտառն էի զայն կտրեր,  
Քեզի ընծայ, մին հայրենիք.  
Եղեգնեայ գրչով երգեցի քուրմեր.  
Ընդ եղեգան փող ծովս ելաներ:

Այս տողերը մեզ չե՞ն հիշեցնում արդյոք մեր Գոյշան երգերի պատահիներից ինչինչ հաստվածներ: Կամ՝ Մեծարենցի հետևյալ տողերը.

Յուշիկ փախսող իրիկուան ծիրանի  
լոյսն է զուարթ.  
Ուկի թելեր պլուած խունկի  
թաիշ մշուշին.  
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծփուն  
ձայներ, միստիկ վարդ.  
Լոյսէ արցունք մոմերու, որոնք հանդարտ  
կը մաշին:

Սա հեռավոր արձագանքը չէ՝ միթե կիրակամտի ժամերգության ժամանակ երգվող «Լոյս զուարթ» շարականի՝ բանաստեղծի հոգու տաճարում երկարաձրգության նրա «Աստուածամար» քերթվածի և Նարեկացու՝ Աստվածամորը նվիրված անընման տաղի միջև: Ահա մի քանի տող Մեծարենցի այդ քերթվածից:

Դուն աստուածեան գեղեցկովեան  
արփաւոր հարս,  
Սրբութեան կոյսը ձիւնաձիր  
ու հրավարս.  
Գիշերին մէջ կ'իշնէ դեռ ուղիւր  
լուսեղէն,  
Կաթի՛ մը կաթ ծովացած  
քու սրբութենէն:

### Նարեկացունը՝

Ահա կաթի մի կաթին քում  
կուտափեան  
յանձն իմ անձեւեալ՝ կենաց  
ինձ զօրէ:

Այս օրինակները կարելի է դեռ երկարել,  
բայց, կարծում եմ, այսքանն էլ բավական  
է՝ ցոյց տպու համար, թե ինչպես մեր  
անցյալի բանաստեղծության ոգեկան մըթ-  
նոլորտը դարեր հետո արտահայտություն  
է գտել վերոհիշյալ բանաստեղծների  
ստեղծագործությունների մէջ դրսուրման  
նոր, ինքնատիպ ձևերով:

Դուրյանի նման Մեծարենցը ևս ունեցավ  
դժբախտ ճակատագիր: Այդունց ընդամենը  
22 տարի: Մեր գրականությանը տվեց  
«Ծիածան» և «Նոր տաղեր» վերնագրերով  
քերթվածների երկու վտիտ հատորներ: Ունի նաև արձակ էջեր, գրական ուսում-  
նասիրություններ և տարրեր բնույթի ար-  
ժեքավոր հոդվածներ՝ բոլորն էլ իր կան-  
խահաւ տաղանդի կնիքը կրող: Սակայն  
նա մեր գրականության մէջ առավելապես  
հայունի է որպես գտարյուն գալստացի  
բանաստեղծ: Բնիկ Ակնցի (ծնվել է Ակնա  
շրջանի Բինեկյան գյուղում), նրա մանկու-  
թյունն ու պատանեկությունը անց է կացել  
իր հայրենի գյուղի հարուստ բնույթան ծո-  
ցում, և մատաղ հասակում նրա երևակա-  
յությունը օրորվել է Ակնա «Անտումի» նե-  
րի և ժողովրդական մյուս երգերի հմայքի  
ներքո: Սուանալով իր անձնական ցավե-  
րը, իր դաման հիվանդությունը, ինչպես  
նաև իր ժողովրդի դժբախտ վիճակն ու  
կրած տառապանքները, նաև ոգեկան ան-  
սապա ուժով և մեծ ճաշակով երգել է բնու-  
յթյունը իր շոայլ գեղեցկություններով, թո-  
վիչ ձայներով ու լուսություններով, իր խոր-  
հըրդավոր ուժերով և մեծ իմաստությամբ՝  
նոր էջ բանալով արևմտահայ բանաստեղ-  
ծության մէջ:

Ահա թե ինչպես է բնորոշել Եղիշն Զա-  
րենցը Մեծարենցի բանաստեղծական աշ-  
խարհը.

Արյուն է եղել աշխարհում:—Եղել է եղեռն  
ու կրիվ:  
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամենի երած  
իրար դեմ:  
Աշխարհից հեռու մի գյուղում,  
եղեգմա մի սրինգ կտրած,  
Արև է երգել ու գարուն այս հիվանդ,  
հանճարեղ պատանին:

Մարդասիրական լայն ընդգրկում ունե-  
ցող, մարդկային սիրո վեհագույն զգա-  
ցումներ արտահայտող սքանչելի մի գրր-  
վածք է նրա «Տո՛ւ ինձի, Տէ՛ր» վերնա-  
գիրը կրող բանաստեղծությունը, որ հեղի-  
նակը, որպես արդի մարդու Հայր մեր-ը,  
խոնարհաբար ձնել է Պետրոս Դուրյանի  
կրտսեր եղբոր՝ Երուսաղեմի հայոց ճախ-  
կին պատրիարք Եղիշե արքեա. Դուրյա-  
նին: Այս քերթվածը համամարդկային հըն-  
չեղություն ունի և իրավար համարում է  
նրա լավագույն բանաստեղծություններից  
մեկը: Իր սեփական ուրախությունը իր  
ամաների ուրախության մէջ որոնող, ու-  
րիշների ուրախությունը իր համար գերա-  
գույն երշանկության աղբյուր համարող  
բանաստեղծը անսահման կարտով ցան-  
կանում է ամեն օր, ամեն ժամ, ամեն տեղ,  
բոլոր մարդկանց աշքերի մէջ տեսնել ու-  
րախության ճառագայթներ և այդ ճառա-  
գայթներով լուսավորել ու շերմացնել իր  
հոգին: Հանուն այդ անաձնական ուրա-  
խության, նա ծննի եկած՝ շերմեռադու-  
թյամբ աղոթում է Սատծուն և հայցում.  
«Տո՛ւ ինձի, Տէ՛ր», ուրախությունն ան-  
աձնական:

Սրևմտահայ բանաստեղծության մրցու  
գագաթը Դանիել Վարուժանն է: Սա ժա-  
մանակակից մեր բանաստեղծության պե-  
գասն է՝ կուսական բարձունքների վկա-  
ծախրող թևավոր ձին: Սա նոյնպես գա-  
վակացի է, բայց որից որպակի: Հայրենի  
գավառը իր հովվերգական գեղեցկու-  
թյամբ, հայ գյուղացուն, նրա արդար աշ-  
խատակըն ու վաստակը պատկերված է  
հետմահու հրատարակված նրա սքանչելի  
բանաստեղծությունների մի ժողովածոփ  
մէջ, որ կրում է «Հացին երգը» խոտու  
վերնագիրը: Ստեղծագործական իր կարճա-  
տև կյանքի ընթացքում նա հրատարակել է  
բանաստեղծությունների մի քանի հասոր-  
ներ՝ «Սարտուներ», «Ցեղին սիրու», «Հե-  
թանու երգեր»:

Վարուժանի բնարը բազմալոր է. նա  
հավասար ուժով և հաջողությամբ երգել է  
հայրենիքը, բնությունը, սերը, գեղեցիկը,  
ազնիվը, արդարը, ուժը, իր ցեղի գողգոթան,  
իրավագրկած աշխատավոր զանգվածնե-

ի կյանքն ու պայքարը՝ իր անվերապահ համակրանքն ու կարեկցանքն արտահայտելով այս աշխարհի գրկվածների ու մերժվածների նկատմամբ: Եվ վերջապես մեծ ներշնչանքով ոգեկոչել է հին հեթանուական դարերը, այդ դարերի ասպետական ոդին, հոգու նախնական մաքրությունը՝ դրան հակադրելով իր ժամանակները, որ իշխում է միայն ոսկու անսանձ կիրքը, բարոյական կեղուր, հոգու ամայությունը: Այս բոլորը որպես ընդհանուր միտում, գեղիկ կերպով բանաձևակած ենք տեսնում նրա «Հեթանու երգեր» հատորի սկզբում իբրև բնարան գետեղակած հետևյալ տողերի մեջ.

Ես կ'երգեմ գինին,  
Բագիններուն ծիծաղը եւ խորաններուն  
Դարերու կեանքը կ'երգեմ ես՝  
Յանուն ուժի եւ տառապանքի  
գեղեցկութեան:

Ինչպես նշվեց, Վարուժանի կյանքի թերլ վաղահատորն կտրվեց: Նրա անժամանակ մահով բազում հիանալի մտահղացումներ չիրականացան: Նա ծրագրել էր գրական մշակման ենթարկել «Սամանց տուն» հայ ժողովրդական էպոս ամրողությամբ, գրել «Գինի երգեր» խորագրով բանաստեղծությունների մի նոր շարք և ամենագլխավոր՝ ստեղծել «Հայկական Հոմերագիրը» ընդհանուր անունով մի ժողովածու, որն իր մեջ ամփոփելու էր հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագների հիման վրա հյուսված վարուժանան դյուցանաշունչ պետմեր: Այս բոլորը, եթե Վարուժանը կենանի մնար և հնարավորություն ունենար իրականացնելու, անտարակոյն կատարված կիներ նրա փայտայած մեծ հիջը, որ նա այնքան հուզիչ կերպով արտահայտել է իր հետևյալ խոսքի մեջ. «Հայ գրականութեան պիտի պարգևեմ այնպիսի հզօր գործեր, որ հայ ազգը ինձի պէս զատակ մը ծնած ըլլարուն չօրդայք»:

Վարուժանի անունից անբաժան է Սիամանթոյի անունը որպես բանաստեղծի: Սա հայ ժողովրդի ատեղավատ վրեժի բոցաշունչ երգին է՝ տոգորված հայրենասիրական խոր զացումներով: Ի տարրերություն Վարուժանի, Սիամանթոյի քնարը միալար է. նա գլխավորապես երգել է արյուն ու կոտորած: Ասլերով համիդյան բոնակաւության արյունոտ շրջանում նա դարձավ արյունաներկ գրականության ամենամեծ ներկայացուցիչը հայ իրականության մեջ.

Միաժամանակ, սակայն, չարի ու բռնության դեմ ըմբուտացող ազատության խրոխտ երգիչը: Նրա քերթվածները ամփոփված են մի քանի սովոր հատորների մեջ: Սիամանթոյի ստեղծագործությունը իր արտահայտչական ձևերով և խորհրդանշական պատկերներով նորություն էր արևմտահայ բանաստեղծության մեջ: Հետեւ վերով քերթիացի բանաստեղծ էմիլ Վերհանին, նա հայ բանաստեղծության մեջ մտցրեց տաղաչափական կաշկանդումներից զերծ անհանգ և ազատ ոտանավորի ձևը: Այդ տեսակետից նա շատ կողմերով հիշեցնում է Նարեկացու բանաստեղծական արձակը, որ առկա են ներքին կըռուոյթն ու երաժշտականությունը: Հայ բանաստեղծության մեջ եօակի գործ է Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» երկարաշունչ երրողը, որ հեղինակը բացառիկ հզոր տաղանդով և մեծ ներշնչումով մեծարել է Ս. Մեսրոպ Մաշտոցին, վեր հանելով նրա կատարած մեծ գործի դերն ու նշանակությունը:

Արևմտահայ բանաստեղծության մեծ հնգյակի մյուս ներկայացուցիչը Վահան Թեքեյանն է: Նա հայ գրականության մեջ ծանոթ է որպես խոհական, իմաստախոս բանաստեղծ: Գրական ասպարեզ իշնելով Սիամանթոյի և իր մյուս սերնդակիցների հետ, նա ավելի բախտավոր եղավ նրանցից այն իմաստով, որ նրա կյանքը անժամանակ չընդհատվեց: Երջանիկ պատահանությունն նրան փրկեց Մեծ Եղեռնից, և նա ապրեց ևս 30 տարի՝ նոյանոր գործերով հարստացներով հայ բանաստեղծության գանձարանը:

Թեքեյանը հրատարակել է բանաստեղծությունների հինգ ուշագրավ հատորներ: Երգել է մարդկային տառապանքը, վիշտը, հայ պատմական անցյալը, սերը՝ իր ամենալավը և համապարփակ իմաստով, սկիուռահայության գորավիճակը՝ իր բազմազան հուզերով ու ապրումներով, ինչպես նաև վերածնված հայրենիքը՝ Սովորական Հայաստանը: Թեքեյանը ներքին տառապանք ապրած և իր տառապանքով կյանքի լայն ճանաչման հասած և մեծ կենակիրը ձեռք քերած բանաստեղծ է: Իր քերթվածներում, որոնք մեծ մասամբ հընչյակներ (սունենեկեր) են, նա ընթերցողի առաջ բաց է անում իր ներաշխարհի բոլոր գաղտնի ծալքերը՝ խոստովանելով անխոստովանելին: Լինելով խոհական բանաստեղծ, նա իր հուզերն ու ապրումները աշխատել է ծովել հմացական սեղմ կաղապարների մեջ՝ իր սրտի ճայները ենթարկելով նակալշոնին: Եթե Դուր-

յանը, Սիամանթոն կամ Վարուժանը իրենց հոգելիան բարդ տագմապերն ու ամենասուր ցավերը, լինեն դրանք զուս անհատական, ազգային կամ համամարդկային, աղաղակում ու ճում են հրաբխային խոսքի անսահմ փոթորկումներով, ապա Թեքեյանը այդ բոլորը սեղմում, մի տեսակ սանձում ու կաշկանդում է իր մեջ, այդպիսով հուզքը վերածելով խոհի և իր սեփական գգացումներից քաղելով իմացան, ուղեղային վայելքներ: Սա թերևս ամենաքնորդ հատկանիշն է կազմում նրա ստեղծագործության: Միուրեն ու զգացումը զուգահեռ են ընթանում նրա մոտ, իրար ձուլված՝ կազմելով մի միասնական ամրող շուրջություն:

Այն երկու կարևորագույն և հիմնական տարրերը, որոնցով հատկանշվում է ամեն իրավ բանաստեղծություն՝ պատկերավորությունը և հոգականությունը, որոնց մասին այնքան գեղեցիկ և սպասիչ կերպով արտահայտվեց պատեղ Վեհափառ Հայրապետը ասմունքի մեր նախորդ երեկոներին, ցայտուն կերպով դրսերվում են արևմտահայ այս հինգ բանաստեղծների ստեղծագործություններում: Գեղարվեստական խոսքի պատկերավորությունը, պատկերավոր մտածողությունը անխօնելորեն կապված են բանաստեղծի ստեղծագործ երեսակայության հետ, իսկ հոգականությունը պայմանավորված է նրա ապրումների անկեղծությամբ, անմիշականությամբ, ուժգնությամբ, բայց ամենից առաջ անկեղծությամբ: Ահա այս հատկանիշների շնորհիվ է, որ հիշյալ հեղինակների ստեղծագործությունները խոր արձագանք են գրտնում մեր մեջ, մեզ փոխադրելով բանաստեղծական խոսքի կախարդական աշխար-

հը: Բայց ավելի լավ է առիթ տանք մեր ամունքողներին, որ իրենց արվեստով իրենք առաջնորդեն մեզ այսօր այդ կախարդական աշխարհից ներս:

Ապա բեմահարթակ են հրավիրվում օրվա ամունքողները՝ մասնագիտությամբ բժիշկ պրա. Կամ Տեր-Պետրոսյանը և ֆիզիկոս տկն. Մարի Պահուտյանը: Ընորհայի ամունքողները մեծ հոգումով, բարձր վարպետությամբ ու յուրովի մեկնարանամբ են արտասանում Պետրոս Դուրակի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի ու Վահան Թեքեյանի ստեղծագործություններից ընտրված գոհարները: Ներկաները հոգված են ինքնուս ամունքողների վարպետությամբ, իսկ արևմտահայ մեծատաղանդ բանաստեղծների ստեղծագործությունները նրանց տեղափոխում են կախարդական մի աշխարհ: Յուրաքանչյուր արտասանություն ընդունվում է ծափահարություններով:

Հավարտ ամունքի Վեհափառ Հայրապետը հայտնում է իր խորին գոհունակությունը և ցանկություն արտահայտում նորից հանդիպելու, «որպեսզի վայելենք ձեր տաք շունչը, ձեր ապրումները և այնքան հարազատ մեկնարանությունը արևմտահայ բանաստեղծության»: Նորին Սրբությունը ի մասնավորի բարձր է գնահատում պրա. Պարգև Շահբազյանի համառոտ, բայց համապարփակ խոսքը, որտեղ զեկուցողը «հարազատ, պայծառ և իրական ներկայացրեց արևմտահայ բանաստեղծությունը»:

Ապա Վեհափառ Հայրապետը իր օրինությունն է բաշխում զեկուցողին, ամունքողներին և ներկաներին:

